ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

7 հարցերի կարճ պատասխաններ

1 Ի՞նչ է հեղինակային իրավունքը:

Հեղինակային իրավունքը պաշտպանում է գրական, գիտական և արվեստի բնագավառի **ստեղծագործությունները՝** սկսած դրանց ստեղծման պահից:
Օրինակ՝ գրքեր, բանաստեղծություններ, ֆիլմեր, լուսանկարներ, երաժշտություն, ծրագրային ապահովում:



2 Ի՞նչը կարող է հանդիսանալ հեղինակային իրավունքի օբյեկտ:

- Գրական և գեղարվեստական ստեղծագործություններ,
- Համակարգչային ծրագրեր,
- Լուսանկարներ և նկարչական աշխատանքներ,
- Երաժշտական ստեղծագործություններ,
- Ֆիլմեր և տեսաձայնագրություններ,
- Դիզայնի որոշ տարրեր:

Հեղինակային իրավունքով **չեն պահպանվում՝**

- գաղափարները, սկզբունքները, մեթոդները, ընթացակարգերը, տեսակետները,
- ժողովրդական բանահյուսության և արվեստի ստեղծագործությունները,
- օրվա նորությունների կամ ընթացիկ իրադարձությունների և փաստերի մասին տեղեկատվությունը,
- իրավական ակտերը, պայմանագրերը և դրանց պաշտոնական թարգմանությունները,
- պաշտոնական խորհրդանիշներն ու նշանները,
- քաղաքական ելույթները, դատավարական ճառերը
- առանց մարդու ստեղծագործական գործունեության՝ տեխնիկական միջոցների օգնությամբ ստացված արդյունքները:

3 Ո՞վ է հեղինակը:

Հեղինակն այն **ֆիզիկական անձն է,** ով ստեղծել է ստեղծագործությունը: Հեղինակային իրավունքները առաջանում են **ինքնաբերաբար և չեն պահանջում** պետական գրանցում *(սակայն ստեղծման փաստը ոչ պաշտոնական եղանակով ամրագրելը ցանկալի է՝ հետագայում ապացուցման նպատակով):*





4 Որո՞նք են հեղինակային իրավունքի տեսակները:

Հեղինակային իրավունքները ներառում են հեղինակի **անձնական ոչ գույքային իրավունքները** (օրինակ՝ որպես հեղինակ ճանաչվելու իրավունքը, ստեղծագործությունն իր անվամբ, կեղծանվամբ կամ անանուն օգտագործելը, և այլն) և **գույքային իրավունքները** (օրինակ՝ ստեղծագործության վերարտադրումը, տարածումը, վարձույթով հանձնելը, թարգմանելը, և այլն):

Հեղինակի անձնական ոչ գույքային իրավունքները պատկանում են **ՄԻԱՅՆ և չեն կարող փոխանցվել երրորդ անձանց:**

Գույքային իրավունքները կարող են փոխանցվել երրորդ անձանց, ինչպես նաև վճարի դիմաց տրամադրվել **լիցենզային պայմանագրով:**

5 Հեղինակային իրավունքի գործողության ժամկետը՝

- Հեղինակի հիմնական (գույքային) իրավունքները գործում են հեղինակի **ողջ կյանքի** ընթացքում և մահվանից հետո **70 տարի,**
- Դրանից հետո՝ ստեղծագործությունն անցնում է **հանրային սեփականությանը:**

6 Ի՞նչն է համարվում հեղինակային իրավունքի խախտում:

Ուրիշի ստեղծագործության օգտագործումը առանց թույլտվության, օրինակ՝

- Ֆիլմի, երգի կամ նկարի տեղադրումը համացանցում առանց հեղինակի նշման կամ լիցենզիայի,
- Դիպլոմային կամ գիտական աշխատանքում որևէ մտքի օգտագործումը՝ առանց հղում կատարելու հեղինակին:

7 Ի՞նչ է ծառայողական ստեղծագործությունը:

Ծառայողական ստեղծագործություններ են համարվում այն ստեղծագործությունները, որոնք ստեղծվել են **գործատուի** ծառայողական առաջադրանքով: Այս դեպքում **աշխատողը** համարվում է այդ ստեղծագործության **հեղինակ,** սակայն **գույքային իրավունքները** պատկանում են **գործատուին**: Գործատուն ծառայողական ստեղծագործությունը կարող է օգտագործել առանց սահմանափակման և առանց հեղինակին վարձատրություն վճարելու, եթե հեղինակի և գործատուի միջև կնքված պայմանագրով ստեղծագործությունն օգտագործելու այլ պայմաններ նախատեսված չեն: